ՀՈԴՎԱԾՆԵՐ СТАТЬИ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ*

Պրոֆ. Մ. Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

1. ՀԱՅԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Տասնիններորդ դարի շեմին, ինչպես և նախորդ երեք դարերի ընթացքում, Հայաստանը բաժանված էր Մերձավոր Արևելքի երկու բռնապետությունների՝ սուլթանական Թուրքիայի և շահական Պարսկաստանի (Իրանի) միջև։

Արևելյան Հայաստանը (Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանները՝ Արարատյան դաշտավայրը, Զանգեզուրը, Շիրակը, Սևանի ավազանը, Լոռի-Փամբակը և այլն) գտնվում էր Պարսկաստանի տիրապետության տակ։ Հայաստանի այս մասում և հարևան Ադրբեջանում ու Վրաստանում XVIII դարի վերջերին գոյություն ունեին մի շարք ավատական իշխանություններ, ինչպես օրինակ՝ Երևանի, Նախիջևանի, Ղարաբաղի, Գյանջայի (Գանձակի), Բաքվի խանությունները, կիսանկախ թագավորություններ Վրաստանում, մանր իշխանություններ Շիրակում, Ղազախում և Փամբակում։

Արևելյան Հայաստանի կենտրոնական և մեծ մասն ընդգրկված էր Երևանի խանության մեջ, որը, որպես համեմատաբար խոշոր և սահմանային խանություն, անվանվում էր նաև սարդարություն (կուսակալություն), իսկ նրա խանը՝ սարդար։ Երևանի խանությունը բաժանված էր 15 մահալների (շրջանների), որոնց թվում՝ Զանգիբասարի, Վեդիբասարի, Սուրմալուի, Սարդարապատի, Թալինի, Ապարանի, Դարաչիչակի, Գյոկչայի և այլն։ Աչքի ընկնող քաղաքներն ու գյուղերն էին Երևանը, Էջմիածինը, Սարդարապատը, Աշտարակը, Կարբին և Բաշ-Ապարանը։

Խանության գլուխն էր կանգնած շահի կողմից նշանակված պարսիկ խանը, որի իշխանությունն անսահմանափակ էր. բոլոր գործերը նա վարում էր ինքնիշխան կերպով։ Մահալները կառավարում էին միրբոլուքները՝ խանի կողմից նշանակված աղնվական անձինք, իսկ գյուղերը՝ գյուղապետները, որոնք քյոխվա կամ քեթխուդա անունն էին կրում։ Քաղաքների կառավարիչները կոչվում էին քալանթարներ, ոստիկանները՝ ֆարրաշներ, իսկ զինվորները՝ սարբազներ։ Խանության գործերը վարելու համար պահվում էին բազմաթիվ պաշտոնյաներ՝ խազնադար (ֆինանսական գործերի ղեկավար), սանդուղդարաղասի (ծախսարար), ամբարդար-աղասի (շտեմարանապետ), սերաֆյուլ-բեկ (ռազմական գործերի ղեկավար), մուհասիլ-բեկ (հարկահան), ղալա-բեկ (բերդերի պետ) և այլն։

Արևմտյան Հայաստանը (Հայաստանի հարավ-արևմտյան շրջանները՝ Վասպուրական, Տարոն, Սասուն, Ալաշկերտի ու Խարբերդի դաշտերը, Կարսի, Կարինի սարահարթերը և այլն) գտնվում էր Թուրքական լծի տակ։ Այն, ինչ-

---

* *Հրատարակության է պատրաստվում հայ ժողովրդի պատմության համառոտ ուրվագիծը մեկ հատորով։ Ստորև տպագրում ենք այդ աշխատության գլուխներից մեկը։* Խմբագրություն։

պես և ամբողջ Օսմանյան կայսրությունը, վարչականորեն բաժանված էր փաշայություններ։ Արևմտյան Հայաստանում գոյություն ունեին Վանի, Բայազեդի, Սրվազի (Սեբաստիայի), Էրզրումի (Կարինի), Կարսի և Դիարբեքիրի փաշայություններ, որոնք բաժանված էին սանջակների (գավառների), սանջակները՝ գյուղերի։ Փաշայությունները կառավարում էին փաշաները, սանջակները՝ սանջակ-բեկերը։ Փաշաները, որ ինքնիշխան էին, նշանակվում էին սուլթանի, սանջակները՝ փաշաների, իսկ գյուղապետերը՝ սանջակ-բեկերի կողմից։

Փաշայությունները իրականում ներփակ և կիսանկախ ֆեոդալական իշխանություններ էին։ Դրանք հաճախ փորձում էին չենթարկվել սուլթանական կառավարությանը, որին դժվարությամբ էր հաջողվում սանձահարել կենտրոնախույս ուժերին։

Թե՛ Արևելյան, և թե՛ Արևմտյան Հայաստանում տնտեսական կյանքը գտնվում էր խիստ հետամնաց վիճակում։ Ժողովրդի հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն էր, որ տարվում էր պրիմիտիվ եղանակով։ Երկրագործության մեջ կիրառվում էին արորը, մանգաղը, կալսող կամը և հին, նահապետական շրջանի այլ գործիքներ։ Հողային ընդարձակ տարածություններ անմշակ էին մնում։ Անբերրիությունը և դրա հետևանք հանդիսացող սովը կրկնվում էին պարբերաբար։ Լեռնային և նախալեռնային շրջաններում զբաղվում էին անասնապահությամբ։

Բնակչության մեծագույն մասը ապրում էր գյուղերում, որոնք գտնվում էին շատ անմխիթար վիճակում։ Գյուղերի մասին մի ականատես գրել է. «Հողով ծածկված փոսեր, որոնք տեղավորված են առանց որևէ կարգի և իրարից բաժանվում են աղբի դարշահոտ կույտերով, կամ ոչ պակաս գարշահոտ լճակներով. փոքրիկ ուղիներ, որոնք պտույտներ են անում տներին փոխարինող այդ փոսերի շուրջը կամ կտուրների վրայով— ահա այդ գյուղերի ընդհանուր տեսարանը։ Բնակարանների ներսը համապատասխանում է նրանց արտաքինին։ Ամենալավ ընդունարան-սենյակը գոմն է. այդտեղ են տանում հյուրերին։ Այդ բանը ձմեռն իր օգուտն ունի, որովհետև գոմերի մեջ ավելի տաք է լինում, քան մյուս՝ բամիների համար բաց բաժանմունքներում։ Երբեմն բնակիչները և նրանց ընտանիքները ապրում են առանձին բաժանմունքներում, ուր հատակի մեջտեղը վառած կրակի ծուխը լցնում է ամբողջ սենյակը և ապա դուրս գալիս կտուրի մեջ բացված անցքով՝ երդիկից։ Այդտեղ երեխաների հետ միասին գիշերում են հորթերը, գառները, հավերն ու աքաղաղները»։

Արհեստներից համեմատաբար տարածված էր հյուսնությունը, դարբնությունը, կոշկակարությունը, ներկարարությունը, ջուլհակությունը, զինագործությունը, ոսկերչությունը և այլն, որոնք, դակայն, գտնվում էին հետամնաց վիճակում։ Արտադրությունը կատարվում էր ձեռքի աշխատանքով, չկային անհրաժեշտ գործիքներ ու սարքավորում, որի հետևանքով մեծ ջանք էր թափվում, բայց ստացվում էր քիչ և ցածր որակի արտադրանք։

Արհեստավորներն ընդգրկված էին արհեստավորական միությունների մեջ, որոնք Արևելյան Հայաստանում կոչվում էին համքարություններ, իսկ Արևմտյան Հայաստանում՝ էսնաֆություններ։ Այդ միությունները, որ ընդգրկում էին միևնույն զբաղմունքն ունեցող արհեստավորներին, ինքնամփոփ և որոշ չափով ինքնավար կազմակերպություններ էին։ Նրանք իրենց տնտեսա-

կան հարցերը, վեճերը ու ներքին կարգի մյուս խնդիրները լուծում էին ինքնուրույն և կազմակերպում ժողովներ, հավաքույթներ ու տոնախմբություններ։

Համքարություններն ունեին հատուկ դրոշակներ, դերբեր, դրամական միջոցներ, որ գործադրվում էր փոխադարձ օգնության համար։ Համքարության գլուխն էր կանգնած նշանավոր վարպետներից մեկը՝ ուստաբաշին։ Սա ուներ օգնականներ, որոնք կոչվում էին աղսաղկալներ։

Հայաստանի բաղաքներից էին Երևանը, Կարսը, Վանը, Բայազեդը և Բաղեշը։ Սրանք պահել էին իրենց միջնադարյան բնույթը և գտնվում էին հետամնաց վիճակում. փոքրաթիվ էր բնակչությունը, չկար արդյունաբերություն։ Երևանի մասին, օրինակ, ցարական վիճակագիր Ի. Շոպենը գրել է. «Նրա տեսքը միապաղաղ է և տխրություն է առաջացնում... փողոցները նեղ ես և այնքան ոլորապտույտ, որ նրանք իրար հարում են գրեթե առանց ուղիղ անկյուն կազմելու։ Այդ փողոցները կազմված են երկու շարք ցածր, տձև պատերից, որոնց մի մասը շինված է նուրբ աղյուսից կամ կոպիճից, բայց հաճախ՝ ուղղակի ցեխից։ Ձափաղանց տգեղ այդ պատերը երբեմն ընդհատվում են տների ցածր դռներով, որոնք խնամքով միշտ փակ են լինում։ Գլխավոր փողոցների արանքով հոսում է գետակը, որից ջուրը առուներով բաշխվում է այգիներին։ Այդ ջուրը, ողողելով ճանապարհը և պատերը, կազմում է վտանգավոր փոսեր, որոնք ամառը դառնում են ժանտահոտ ճահիճներ։ Ձմեռը առուները սառչում են, ջուրը, դուրս գալով առուներից, հեղեղում է փողոցները և տեղ-տեղ սառցապատումներ կազմելով, երբեմն բոլորովին ընդհատում է հաղորդակցությունը»։

Առևտուրը չստացավ լայն զարգացում, բայց քաղաքներում կատարվում էր աշխույժ ապրանքափոխանակություն, որին որոշ չափով նպաստում էր այն, որ Հայաստանի վրայով էին անցնում առևտրական ճանապարհները։ Այսպես. դրանցից մեկը, որ Կ. Պոլիսը կապում էր Թավրիզի հետ, անցնում էր Սեբաստիայի, Էրզրումի, Բայազեդի և Խոյի վրայով, մյուսը՝ Թիֆլիսը կապում էր Էրզրումի հետ և անցնում էր Ղարաքիլիսայով ու Գյումրիով։ Երևանը կապված էր Թիֆլիսի, Թավրիզի և Էրզրումի, իսկ Վանը՝ Թավրիզի ու Էրզրումի հետ։

Հայաստանում, ինչպես և ամբողջ Թուրքիայում ու Պարսկաստանում տիրում էին ֆեոդալական հարաբերություններ։ Արտադրող հիմնական դասակարգը՝ գյուղացիությունը և աշխատավորության մյուս խավերը, ենթարկվում էին դաժան կեղեքումների ու ճնշումների։ Ժողովրդական մասսաները ենթակա էին խաների, բեկերի, փաշաների, շեյխերի, դերեբեյների, հայ մելիքների ու կալվածատերերի, բարձրաստիճան հոգևորականների և ազնվական դասի մյուս ներկայացուցիչների անլուր հարստահարություններին ու կամայականություններին։

Աշխատավոր զանգվածների տնտեսական շահագործումը և կեղեքումները կատարվում էին գլխավորապես հարկերի գանձման միջոցով։ Հարկերը, որ բազմաթիվ էին ու բազմատեսակ, գանձվում էին հողից, ջրից, արոտատեղերից օգտվելու համար, անասունների գլխաքանակից, մեղվի փեթակներից, ջրաղացներից, բաղնիքներից։ Հարկ էին հավաքում աղ գործածելու, հարսանիքի իրավունք ստանալու համար։ 15 տարեկանից բարձր տարիք ունեցող յուրաքանչյուր տղամարդ տալիս էր գլխահարկ, ամեն մի ընտանիք՝ ծխահարկ։ Կային նաև այլ հարկեր ու տուրքեր, որոնց թիվը հասնում էր մինչև

քառասունի։ Հարկային այս սիստեմի օգնությամբ գյուղացուց խլվում էր նրա եկամտի մեծ մասը։ Բազմաթիվ ծանր հարկեր վճարում էին նաև արհեստավորներն ու առևտրականները։ Գյուղացիներից հարկերը հավաքվում էին գլխավորապես բնարդյունքով, իսկ արհեստավորներից ու առևտրականներից՝ դրամով։

Հարկերը գանձվում էին բռնի միջոցով։ Երևանի խանության մեջ հարկերը հավաքում էին խանի հատուկ պաշտոնյաները, որոնք կոչվում էին սարքարներ։ Սրանց մասին հայ մեծ գրող ու լուսավորիչ Խաչատուր Աբովյանը պատմում է հետևյալը. «Ամեն տարի ամառը մեր գյուղն էր գալիս սարքարը հացի բերքից խանական հարկը հավաքելու համար... Գյուղում նա մնում էր 3—4 ամիս։ Այդ ժամանակամիջոցում նրան տրամադրվում էր գյուղի ամենալավ բնակարանը։ Սարքարն իր ծառաների ու ձիերի համար խիստ հոգատար վերաբերմունք և լավ սնունդ էր պահանջում։ Ամեն օր սարքարի բնակարանն էին տանում ամենալավ կերակուրներ— հավ, ձու, յուղ, միս և այլն։ Գյուղի գզիրն ամեն օր տնից տուն էր անցնում և պահանջում սարքարի ցանկացածը։ Սովորաբար նրա հետ, մտրակը ձեռքին, գնում էր սարքարի ծառան, որպեսզի դանդաղաշարժության դեպքում պատժի գզրին։ Նա (սարքարի ծառան) ծեծելով քշում էր գզրին և սոսկալի հայհոյանք թափում նրա գլխին։ Երբ տանտերն անմիջապես չէր կատարում բոլոր պահանջները, սարքարի ծառան գաղանի կատաղությամբ տուն էր ներխուժում, ջարդում ամեն ինչ և ծեծում բոլորին, առանց հասակի ու սեռի խտրության։ Եթե սա էր ծառան, ապա կարելի էր եզրակացնել, թե ինչ էր տերը»։

Հարկերը անփոփոխ չէին։ Ամեն ինչ կախված էր խաների, փաշաների ու բեկերի քմահաճույքից. միշտ նորանոր հարկեր էին նշանակվում և ավելի բարձրացվում եղածների չափը։ Երբ գյուղացիներն ի վիճակի չէին լինում վճարելու պահանջվող հարկերը, սարքարները տանում էին նրանց կանանց ու զավակներին։ Մեսրոպ Թաղիադյանը՝ XIX դարի առաջին կեսի հայ նշանավոր գրողներից մեկը, Երևանի Հուսեյն խանի հարկահանության մասին պատմում է. «...Անպատմելի խժդժությամբ բռնանում էր, առնում, հափշտակում էր յուր համար ինչ կահ կարասի որ նրանց (գյուղացիների) տանը գրտնում էր և սրանց պակասելու դեպքում նրանց կանանց ու որդիներին էլ էր խլում... Շատ էր պատահում, որ այս բոլորից էլ դատարկ մնալով ու չգոհանալով՝ ծեծով յուր համար ոսկիներ էր հանում և տառապյալների տանջանքներից արյուն էր հավաքում խմելու համար։ Ամբողջ երկիրը կեղեքելով մաշում էր։ Ժողովրդի քրտինքով Ղազվինում դաստակերտներ էր կառուցում և յուր գանձարանը ճոխացնում»։

Նմանօրինակ և ավելի խիստ բռնություններ կատարվում էին նաև Արևմտյան Հայաստանում։ Այդտեղ հարկերի գանձումը հաճախ կապալով տրվում էր զանազան առևտրականների ու վաշխառուների։ Օգտվելով իրենց տրված լայն իրավունքներից, նրանք հափշտակում էին գյուղացու ունեցվածքը։ Այդ կապալառուները կատարյալ պատուհաս էին ժողովրդի համար։

Աշխատավոր մասսաների սոցիալ-դասակարգային շահագործումը, սակայն, չէր սահմանափակվում հարկերով ու տուրքերով։ Գյուղացիները իշխող դասի համար կատարում էին նաև կոռային ու բեղարային պարտավորություններ. կառուցում էին բերդեր, տներ, պահեստներ ու ճանապարհներ, մշակում էին հողեր և այլն։ Տարեկան մի քանի օր գյուղական ամբողջ համայնքն իր

արտադրության միջոցներով աշխատում էր խաների, փաշաների, բեկերի ու աղալարների կալվածքներում։ Արևելյան Հայաստանում ֆեոդալական այս պարտավորությունը կոչվում էր ավարեղ։ Որոշ տեղերում, ինչպես, օրինակ, Բայազեդի, Մուշի ու Դիարբեքիրի փաշայություններում, ֆեոդալի տնային աշխատանքները կատարում էին գյուղացի կանայք ու աղջիկները։ Այդ փաշայություններում գյուղացիությունն ապրում էր ճորտական վիճակում։ Անլուր կեղեքումների հետևանքով ժողովուրդը գտնվում էր ծայրաստիճան աղքատության մեջ։

Ծանր էր ժողովրդի նաև իրավական դրությունը։ Խանական ու փաշայական դաժան ռեժիմը ոտնահարել էր հայերի քաղաքացիական ու քաղաքական բոլոր իրավունքները։ Ի տարբերություն մահմեդական բնակչությունից, հայ ժողովուրդն անվանվում էր ռայա, այսինքն՝ իրավազուրկ, ստորին շերտ։ Հայը, որպես քրիստոնյա, իրավահավասար քաղաքացի չէր, զուրկ էր այն իրավունքներից, որ ուներ մահմեդականը։ Սրա վկայությունը դատարանում չէր անցնում, նա իրավունք չուներ ձի հեծնել, զենք կրել, մահմեդականի առաջ նա պետք է գլուխ խոնարհեր, իր հագուստով տարբերվեր, հատուկ գլխարկ ու կոշիկներ հագներ և այլն։ Իր աղգային ծագման ու կրոնի համար նա վճարում էր հատուկ հարկեր, որոնցից գլխավորը կոչվում էր խարաջ։ Շահի, խաների ու բեկերի հարեմների համար բնակչությունից բռնի կերպով տանում էին աղջիկների ու կանանց։ Թուրքական սուլթանի հրամանով քրիստոնյա բնակչությունից բռնի կերպով հավաքում էին մանուկներ, որոնցից կազմակերպվում էին հատուկ, այսպես կոչված, ենիչերական զորամասեր։ Հայ գյուղացու իրավազուրկ վիճակի մասին Աբովյանը գրել է. «Աղջիկն ասես՝ քաշում էին, տղեն ասես՝ տանում, շատ անգամ թուրքացնում, հավատից հանում, շատ անգամ էլ գլուխը կտրում, էրում, նահատակում։ Ոչ տունն էր իրանը, ոչ մալը, ոչ ապրանքը, ոչ ջանը, ոչ օղլուշաղը»։

Հայ ժողովուրդը կրում էր բարոյական ծանր հարվածներ, վիրավորվում էին նրա արժանապատվությունն ու նվիրական զգացմունքները։ Իշխանությունները, ֆեոդալներն ու հոգևորականությունը սերմանում, ամեն կերպ խթանում ու պահպանում էին աղգային անհավասարությունը։ Աղգային-կրոնական այդ ճնշումների ծանրությունն առաջին հերթին ընկնում էր աշխատավորության վրա։

Ժողովրդի վիճակն ավելի էր ծանրանում նաև նրանով, որ Արևելյան և հատկապես Արևմտյան Հայաստանում գրեթե մշտապես անիշխանություն էր տիրում։ Կենտրոնական իշխանության հետ թույլ կապերով կապված փաշաներն ու խաները իրենց անկախ հռչակելով՝ արյունահեղ կռիվներ էին մղում մերթ միմյանց, մերթ պետական զորքերի դեմ։ Անընդհատ ու աղետաբեր կռիվներ էին մղում հատկապես Բայազեդի, Վանի և Դիարբեքիրի փաշայությունների շեյխերն ու բեյերը։ Հաճախակի հարձակումներ ու ասպատակություններ էին գործում նաև ղանաղան վաչկատուն ցեղեր ու ավազակային խմբեր։ Այդ կռիվների ու հարձակումների ընթացքում ավերվում ու թալանվում էր երկիրը, կոտորվում և գերեվարվում էր բնակչությունը։ Ժողովուրդն ապրում էր մշտական տագնապի մեջ։ Չկար կյանքի ու գույքի ապահովություն, չկային անհրաժեշտ պայմաններ խաղաղ աշխատանքի համար։ 1805 թ. Արևմտյան Հայաստանով անցած մի եվրոպացի ճանապարհորդ Բայազեդի փաշա-

յության մեջ տիրող իրադրության մասին գրել է հետևյալը. «Այս երկիրը ենթարկված է քրդերի ասպատակություններին։ Իզուր հողագործն այնտեղ սերմեր է ցանում։ Հունձը խլում են դեռ չհասունացած։ Ավազակների կատաղությունից և նահանգում իշխող փաշաների հարստահարություններից ազատվելու համար գյուղացին ստիպված է լքել դաշտերը, փախչել ընտանիքով և իր հոտերով։ Այս դժբախտ երկրում գոյություն չունի ոչ հայրենիք, ոչ ապահովություն, ոչ հանգիստ»։

XIX դարի սկզբներին հայ ժողովրդի մի զգալի մասն ապրում էր Հայաստանից դուրս՝ հարևան և հեռավոր երկրներում։ Դարեր շարունակ Հայաստանում տիրող դժնդակ պայմանները, օտար հափշտակիչների կոտորածներն ու ասպատակությունները շատերին էին ստիպել թողնել հայրենիքը և բնակություն հաստատել այլ երկրներում։ Դաղթի դիմած հայերի բնակատեղերի՝ գաղթավայրերի թիվը բավական մեծ էր։ XIX դարի սկզբներին հայ գաղթավայրեր կային Մոսկվայում, Թիֆլիսում, Հյուսիսային Կովկասում (Նոր-Նախիջևան, Մոզդոկ, Ղզլար), Աստրախանում, Ղրիմում, Կոստանդնուպոլսում, Զմյուռնիայում, Հնդկաստանում, Իրանում, Եգիպտոսում, Բուլղարիայում և այլուր։

Հայ գաղթավայրերից շատերը չկտրեցին իրենց կապերը մայր երկրի՝ Հայաստանի հետ։ Գտնվելով համեմատաբար ավելի բարենպաստ քաղաքական ու տնտեսական պայմանների մեջ, նրանք կարողացան եռանդուն մասնակցություն ունենալ հայկական մշակույթի ու հասարակական կյանքի զարգացման գործում։ Այս տեսակետից առանձնապես աչքի ընկան Մոսկվայի, Թիֆլիսի, Նոր-Նախիջևանի, Կոստանդնուպոլսի հայ գաղութները։

Մոսկվայի հայ գաղթավայրը կազմվել էր XVIII դարի կեսերին։ Այն բաղկացած էր գլխավորապես Պարսկաստանից գաղթած հայ առևտրականներից, որոնց մեջ առանձնապես աչքի ընկավ Լազարյանների տոհմը։ Լազարյանները կուտակեցին մեծ հարստություն և ցարական արքունիքում վարեցին բարձր պաշտոններ։ Մոսկվայի հայ գաղութը բազմամարդ չէր, բայց նա նշանակալից դեր խաղաց հայ մշակույթի զարգացման գործում։

Թիֆլիսի և ընդհանրապես Վրաստանի հայ բնակչությունը մեծ զանգված էր կազմում։ XIX դարի սկզբներին միայն Թիֆլիս քաղաքում ապրող հայերի թիվը հասնում էր մոտ 18.000-ի։ Վրաստանի քաղաքների հայ բնակչությունը զբաղվում էր գլխավորապես արհեստներով ու առևտրով։

XIX դարում հայկական մշակույթի զարգացման և մտավոր կյանքի վերածնության գործում խոշոր դեր խաղաց Թիֆլիսի հայ գաղութը, որը կազմվել էր հին ժամանակներում։

Նոր-Նախիջևանը (Դոնի Ռոստովի մոտ), որ ամբողջապես հայկական քաղաք էր, հիմնվեց 1780 թ.։ Նրա բնակչությունը 1778 թ. գաղթել էր Ղրիմից։ Դարի սկզբներին Նոր-Նախիջևանում և նրա շրջակայքում հիմնված հինգ հայկական գյուղերում բնակվում էին մոտ 12.000 մարդ։ Նոր-Նախիջևանի հայ համայնքն իր ներքին գործերում ինքնավար էր։ Նա ուներ առանձին դատարան. կուլտուր-կրթական և նման այլ հարցերը լուծվում էին համայնքի ներսում։

Կոստանդնուպոլսի հայ բնակչության թիվը XIX դարի սկզբին կազմում էր 200 հազարից ավելի։ Հայերը այդտեղ էին գաղթել գլխավորապես Արևմտյան Հայաստանի գավառներից։ Կոստանդնուպոլսում էր նստում արևմտահայերի կրոնական առաջնորդը՝ պատրիարքը։ Պոլսահայ համայնքը ևս իր ներքին գործերում ինքնավար էր։

Վենետիկում ստեղծվեց հայկական մշակույթի կենտրոններից մեկը։ 1717 թ. Մխիթար Սեբաստացի վարդապետը Վենետիկի Ս. Ղազար կղզում հիմնեց կրոնական մի միաբանություն, որը և նրա անունով կոչվեց Մխիթարյան միաբանություն։ Չնայած իրենց կրոնա-սխոլաստիկական գաղափարախոսությանը, մխիթարյանները զգալի աշխատանք կատարեցին հայ ժողովրդի պատմության ու մշակույթի ուսումնասիրության և մասսայականացման գործում։ XIX դարում նրանցից շատերը զբաղվեցին դիտական և հրատարակչական գործունեությամբ։

Բուն Հայաստանում ապրող և դաժան կեղեքումների ու ճնշումների ենթակա հայ ժողովուրդը XIX դարի սկզբներին ի վիճակի չէր սեփական ուժերով, առանց դրսի օգնության տապալելու խաների ու փաշաների բիրտ տիրապետությունը։ Նա կարիք ուներ օգնության, իսկ ստեղծված պատմական իրադրության մեջ այդպիսի օգնություն կարելի էր ստանալ Ռուսաստանից։

Ցարական կառավարությունը, ելնելով իր տնտեսական ու քաղաքական շահերից, գործնական ձեռնարկումներ էր կատարում Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու ուղղությամբ։ Հայ ժողովուրդը ձգտում էր դեպի Անդրկովկաս շարժվող ռուսական զորքերի օգնությամբ տապալել խաների, փաշաների, շեյխերի ու բեկերի ծանր լուծը և մտնել ռուսական հովանու տակ։ Տվյալ ժամանակաշրջանում այդ էր միակ ելքը։ Ժողովրդական լայն մասսաները ունեին ռուսական կողմնորոշում։ Հայ ազատագրական շարժման գործիչները, իրենց նախորդների նման, կապվեցին ռուսական սրբունիքի հետ և աշխատեցին արագացնել ռուսական բանակների մուտքը Անդրկովկաս։ Ցարական կառավարությունը իր հերթին կապեր հաստատեց հայ ղեկավար գործիչների հետ և նրանց օգտագործեց Հայաստանը Ռուսաստանին միացնելու համար։

XIX դարի սկզբներին լայն գործունեություն ծավալեց, մասնավորապես, նշանավոր քաղաքական գործիչ, արքեպիսկոպոս, հետագայում կաթողիկոս Ներսես Աշտարակեցին (1770—1857)։ Նա մեծ ջանքեր թափեց Հայաստանը խաների ու բեկերի ծանր լծից ազատելու ուղղությամբ։

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՁԱՏԱԳՐՈՒՄԸ ԽԱՆԱԿԱՆ ԼԾԻՑ

Ռուսական կայսր Ալեքսանդր առաջինի հատուկ հրովարտակով 1801 թ. Արևելյան Վրաստանը միացվեց Ռուսաստանին (Արևմտյան Վրաստանը միացվեց 1803—1810 թթ.)։ Պատմական այդ ակտով Ռուսաստանի կազմի մեջ մտան նաև Լոռի-Փամբակի, Շամշադինի և Ղազախի գավառները, որոնք տվյալ ժամանակաշրջանում ենթակա էին Վրաստանին։

Ցարական կառավարությունը միաժամանակ գործնական քայլեր կատարեց, որպեսզի իր կայսրության կազմի մեջ առնի Անդրկովկասի նաև մյուս

մասերը՝ Ադրբեջանն ու Արևելյան Հայաստանը։ Այդ խնդրի իրագործումը, սակայն, համեմատաբար դժվար էր, որովհետև Արևելյան Հայաստանում և Ադրբեջանում իշխող խաները և պարսկական արքունիքը պատրաստվում էին զենքով պահպանել իրենց տիրապետությունը։ Դրությունն ավելի բարդանում էր նրանով, որ Անգլիան ու Ֆրանսիան, ելնելով իրենց նվաճողական քաղաքականությունից, ամեն կերպ օգնում էին պարսիկ խաներին ու թուրք փաշաներին խափանելու ցարական կառավարության ծրագրերը։

1804 թ. պատերազմ սկսվեց Ռուսաստանի և Պարսկաստանի միջև, որը որոշ ընդհատումներով տևեց մինչև 1813 թ.։ Ռուսական բանակը տեղական բնակչության օգնությամբ ծանր հարվածներ հասցրեց պարսկական զորքերին։ 1804 թ. ռուսական զորամասերը, գեներալ Ցիցիանովի ընդհանուր հրամանատարությամբ, մի շարք ճակատամարտերից ու գրոհներից հետո գրավեցին Գյանջայի բերդը։

Մեկ տարի հետո՝ 1805 թ., ռուսական մի զորամաս, գնդապետ Նեսվետաևի հրամանատարությամբ, ետ շպրտելով Երևանի խանի զորքերը, գրավեց Շիրակի արևելյան մասը։ Այսպիսով Արփաչայ (Ախուրյան) գետի ձախափնյա շրջանը նույնպես միացվեց Ռուսաստանին։ Նույն թվականին խաղաղ բանակցությունների միջոցով ռուսական հպատակություն ընդունեցին Ղարաբաղի, Շաքիի (Նուխու) և Շիրվանի (Շամախու) խաները։ 1806 թ. Կովկասի նոր կառավարչապետ գեներալ Գուդովիչին հաջողվեց Ռուսաստանին կցել Դերբենդի, Բաքվի և Ղուբայի խանությունները։

Վճռական ճակատամարտեր տեղի ունեցան 1812 թ.։ Հոկտեմբերի 20-ին, Արաքս գետի ափին, Շուշի քաղաքից մոտ 70 կիլոմետր դեպի հարավ-արևելք ընկած Ասլանդուզի դաշտում գեներալ Կոտլյարևսկու զորամասը ծանր պարտության մատնեց պարսից թագաժառանգ Աբաս-Միրզայի զորքերին։ Երկու ամիս անց Կոտլյարևսկին արյունահեղ գրոհներից հետո գրավեց Լենքորանը, որով և Թալիշի խանությունը ևս միացվեց Ռուսաստանին։ Այդ նույն ժամանակաշրջանում ռուսական քաջարի զորքերը գլխովին ջարդեցին Ռուսաստան ներխուժած Նապոլեոն I-ի կես միլիոնանոց բանակը։ Ռուսաստանի այդ փայլուն հաղթանակը մեծ տպավորություն թողեց ինչպես ամենուրեք, այնպես էլ Պարսկաստանում։ Շահի կառավարությունը առաջարկեց հաշտություն։ 1813 թ. հոկտեմբերի 13-ին Ղարաբաղի Գյուլիստան բերդում կնքվեց հաշտության պայմանագիր, որով Արևելյան Վրաստանը, Գյանջայի, Ղարաբաղի, Շաքիի, Շիրվանի, Բաքվի, Ղուբայի, Թալիշի և Դերբենդի խանությունները, ինչպես նաև Շիրակը, Լոռին, Ղազախը, Շամշադինը, Զանգեզուրը և մի շարք այլ շրջաններ ճանաչվեցին որպես Ռուսական կայսրության տերիտորիաներ։

Ռուս-պարսկական 1804—1813 թթ. պատերազմի ժամանակ ռուսական զորքերը երկու անգամ փորձեցին գրավել նաև Երևանի խանությունը։ Առաջին փորձը տեղի ունեցավ 1804 թ.։ Ռուսական մի զորամաս՝ բաղկացած մոտ 4.500 մարդուց, գեներալ Ցիցիանովի հրամանատարությամբ հունիս ամսին մտավ Արարատյան դաշտ և հուլիսի 15-ին վճռական հարված հասցրեց Ֆաթհ Ալի շահի զորքերին։ Դրանից հետո Ցիցիանովը փորձեց գրավել Երևանը։

Երևանի բերդը կանգնած էր համանուն քաղաքի հարավային ծայրամասում, Հրազդան (Զանգու) գետի բարձր ու ժայռոտ ափին։ Նա երեք կողմից շրջափակված էր երկշարք պարիսպներով։ Ներքին պարիսպը, որ կառուցված էր աղյուսից ու քարից, բավական բարձր էր ու հաստ և ուներ 17 բուրգ։ Ներ-

քին պարսպից 32—40 մետր հեռավորության վրա գտնվում էր արտաքին պարիսպը՝ կառուցված կավից ու քարից։ Սա համեմատաբար բարակ ու ցածր էր։ Բերդի շուրջը վորված էին լայն ու խոր փոսեր, որոնց մի մասը լցված էր ջրով։ Բերդն ուներ 60 թնդանոթ և 2 հրասանդ (մորտիր). կայազորը բաղկացած էր 7.000 զինվորից։

Երևանի պաշարումը տևեց հուլիսի 24-ից մինչև սեպտեմբերի 4-ը։ Ցիցիանովը ձեռնարկեց մի շարք գրոհներ, բայց հաջողություն չունեցավ։ Պարենի և մասնավորապես ռազմամթերքի պակասը լուրջ դժվարություններ ստեղծեց ռուսական զորամասի համար։ Ցիցիանովը թողեց Երևանը և վերադարձավ Վրաստան։

Երևանի երկրորդ պաշարումը տեղի ունեցավ 1808 թ. աշնանը։ Այս անգամ ռուսական մի զորամաս՝ բաղկացած 7.700 զինվորից, գեներալ Գուդովիչի հրամանատարությամբ շարժվեց դեպի Երևան և հոկտեմբերի 8-ին գրավեց քաղաքի այգիներն ու արվարձանները։ Երևանի բերդը առնվեց սեղմ օղակի մեջ։ Նոյեմբերի 17-ին Գուդովիչն անցավ ուժեղ գրոհի, որը, սակայն, չնայած ռուս մարտիկների հերոսական ջանքերին, ապարդյուն անցավ։ Ջորքի մատակարարման դժվարությունները և վրա հասնող ձմեռը ստիպեցին Գուդովիչին վերացնել Երևանի պաշարումը։

Երևանի գրավումը ռուսական զորքերի կողմից տեղի ունեցավ ավելի ուշ՝ ռուս-պարսկական 1826—1828 թթ. պատերազմի ժամանակ։

Գյուլիստանի պայմանագրի կնքումից մոտավորապես 13 տարի հետո՝ 1826 թ., Պարսկաստանը անգլիական կառավարության հրահրումով նոր պատերազմ սկսեց Ռուսաստանի դեմ։ Հուլիսի 16-ին Երևանի սարդար Հուսեյն խանի զորքերը հանկարծակի հարձակումով ներխուժեցին Շիրակի և Փամբակի սահմանները, իսկ 60.000 մարդուց բաղկացած պարսկական գլխավոր բանակը Աբաս-Միրզայի հրամանատարությամբ շարժվեց Լարաբաղի վրա։

Անդրկովկասի դանազան մասերում ցրված ռուսական փոքրաթիվ զորքերի համար ստեղծվեց ծանր վիճակ։ Թշնամին սկզբում ձեռք բերեց զգալի հաջողություններ։ Հուսեյն խանի հրոսակախմբերն ընկճելով հայ գյուղացիության հերոսական դիմադրությունը, գրավեցին Շիրակի և Փամբակի գավառները։ Աբաս-Միրզայի զորքերը հուլիսի 25-ին շրջապատեցին Շուշու բերդը, ուր տեղական հայ բնակչության հետ միասին պատսպարվել էր ռուսական մի փոքրաթիվ զորամաս։ Օգոստոսի ընթացքում թշնամու գերազանց ուժերի հնշման տակ ռուսական զորքերը ետ քաշվեցին Թալիշից և Նուխուց։ Գրավվեց նաև Գյանջան (Ելիզավետպոլը)։ Հաջողություններից արբեցած Աբաս-Միրզան պատրաստվում էր արշավել Թիֆլիսի վրա։

Շահական զորքերի այդ հաջողությունները, սակայն, ժամանակավոր էին։ Կովկասի ռուսական բանակի գլխավոր հրամանատար, ականավոր զորահրամանատար գեներալ Երմոլովը, ստանալով օգնական ուժեր, դիմեց հակահարձակման։ Սեպտեմբերի 3-ին ռուսական մի ջոկատ, հայ նշանավոր գեներալ Մադաթովի հրամանատարությամբ, Շամքորի մոտ գլխովին ջախջախեց հակառակորդի առաջապահ զորամասը։ Տասը օր հետո, սեպտեմբերի 13-ին, Գյանջայի մոտ ծանր պարտություն կրեց և փախուստի դիմեց պարսկական

գլխավոր բանակը։ Աբաս-Միրզան ստիպված եղավ անցնել Արաքս գետը և ճողոպրել դեպի Թավրիզ։

Սեպտեմբեր ամսին պարսկական զորքերից մաքրվեցին նաև Փամբակն ու Շիրակը։ Այս գործն ի կատար ածեց ռուս ժողովրդի 1812 թ. հայրենական պատերազմի հռչակավոր պարտիզան, բանաստեղծ Դենիս Դավիդովը, որը 1826 թ. սեպտեմբերի սկզբներին նշանակվեց Երևանի սարդար Հուսեյն խանի և նրա եղբոր՝ Հասան խանի դեմ գործող ռուսական զորամասի հրամանատար։ Սեպտեմբերի 21-ին Միրաք գյուղի մոտ Դավիդովը պարտության մատնեց խանական զորքերին և հաջորդ օրը մտավ Երևանի խանության սահմանները։ Սակայն Երմոլովի հրամանով Դավիդովը դադարեցրեց իր զորամասի առաջխաղացումը և վերադարձավ Ջալալ-Օղլի (այժմ՝ Ստեփանավան), որովհետև Երևանի վրա արշավելը հետաձգվում էր հաջորդ տարվա՝ 1827 թ. գարնանը։

1827 թ. մարտ ամսին Երմոլովի փոխարեն Կովկասի կառավարչապետ և զորքերի գլխավոր հրամանատար նշանակվեց գեներալ Պասկևիչը, որի հրամանատարությամբ էլ վերսկսվեցին պատերազմական գործողությունները։ Ապրիլի 2-ին ռուսական բանակի առաջապահ զորամասը Շուլավերից շարժվեց դեպի Երևան և նույն ամսի 13-ին, առանց դիմադրության հանդիպելու գրավեց Էջմիածինը։ Հունիսի սկզբներին ռուսական զորքերի գլխավոր ուժերը Պասկևիչի հրամանատարությամբ նույնպես մտան Արարատյան դաշտ։ Հունիսի 26-ին անձնատուր եղավ Նախիջևանի խանը, հուլիսի 7-ին գրավվեց Նախիջևանի մոտ գտնվող Աբասաբադ բերդը։

Ամռան խիստ շոգերի պատճառով ռուսական զորքերը ժամանակավորապես դադարեցրին ռազմական գործողությունները և անցան հանգստի Արագածի և Ղարաբաբայի լեռներում։ Միայն օգոստոսի 17-ին Աշտարակի տակ տեղի ունեցավ կատաղի ճակատամարտ գեներալ Կրասովսկու փոքրիկ զորամասի և Աբաս-Միրզայի՝ թվով տասն անգամ գերազանցող զորքերի միջև։ Ռուս զինվորները և նրանց շարքերում գտնվող հայ ու վրացի կամավորները ցուցաբերեցին բացառիկ խիզախություն և ծանր զոհերի գնով փրկեցին Էջմիածինը թշնամու գրավումից ու ավերումից։

Պատերազմական ակտիվ գործողությունները վերսկսվեցին սեպտեմբեր ամսին։ Պասկևիչը որոշեց գրավել Սարդարապատը և Երևանը։ Սեպտեմբերի 9-ին ռուսական զորքերը շարժվեցին դեպի Սարդարապատ։

Սարդարապատի բերդը կառուցել էր Երևանի սարդար Հուսեյն խանը 1815—1817 թթ. ֆրանսիական ինժեներների ղեկավարությամբ։ Բերդն ուներ քառանկյուն ձև, պարիսպները երկշարք և բարձր էին, մեծ և ամուր էին բուրգերն ու դարպասները, կայազորը բաղկացած էր 2.000 մարդուց։ Բերդի պաշտպանությունը ղեկավարում էր Հասան խանը։

Սեպտեմբերի 13-ին ռուսական զորքերը պաշարեցին Սարդարապատը։ Ամսի 18-ին գործեցին պաշարողական հրանոթները։ Հաջորդ օրը, գիշերով, գաղտագողի բերդից փախավ Հասան խանը։ Բերդում փակված հայ բնակչությունը սեպտեմբերի 19-ին բացեց դարպասները։ Ռուսական բանակի ձեռքն անցավ 13 թնդանոթ, հացի մեծ պաշար և այլն։ Ազատ արձակվեցին խանի կողմից բերդում փակված բազմաթիվ հայ և վրացի գերիներ։

Սարդարապատի գրավումից հետո ռուսական զորքերը շարժվեցին Երևանի վրա, որի պաշտպանությունը ևս իր վրա էր վերցրել Սարդարապատից փախած Հասան խանը։ Բերդում, խանի հրամանով, բռնի կերպով հավաքված

էր մոտ 18.000 մարդ, մեծ մասամբ Երևան քաղաքի և շրջակա գյուղերի հայ բնակիչները։ Ներսես Աշտարակեցին, որ մշտապես գտնվում էր ռուսական բանակում, կապեր հաստատելով նրանց հետ աշխատեց ամեն կերպ դյուրացնել քաղաքի գրավումը։

Սեպտեմբերի 25-ից սկսած Երևանի բերդը ենթարկվեց ուժեղ ռմբակոծության։ Ամսի 28-ին գործել սկսեցին 14 պաշարողական հզոր թնդանոթներ, իսկ 30-ի ամբողջ գիշերը կրակեցին 40 թնդանոթ։ Միայն այդ գիշեր քաղաքի վրա թափվեցին ավելի քան 1000 արկ, որի հետևանքով շենքերի մեծ մասը այրվեց ու քարուքանդ եղավ։ Խաչատուր Աբովյանը այդ օրերի մասին իր «Վերք Հայաստանի» վեպում գրել է. «Ամսի 25-ն էր, որ Երևանու բերդը ծխումը կորավ... 5 օր 5 գիշեր սար ու ձոր դրմբում, դմբդմբում էր։ Հենց գիտես Սոդոմ Գոմորի քուքուրթն ու կրակը էսօր ա վեր գալիս։ Երևանու բերդը ձեթը հատած պատրուքի պես՝ թե մեկ ճրթճրթում էլ էր մեկ սհաթ քիմի, էլ էդ հանքչում, խավարում էր. էնքան թոփի գյուլլա էր գլխին ու սրտին դիպել, հոգին բերանը հասցրել»։

Հոկտեմբերի 1-ի առավոտյան ռուսական մի զորամաս գրավեց բերդի հյուսիս-արևելյան բուրգը, իսկ մի այլ ջոկատ, ընդհուպ մոտենալով հյուսիսային դարպասին և խորտակելով այն, մտավ բերդ։ Գրավվեց Երևանի նշանավոր բերդը։ Խանի կայազորը, որ բաղկացած էր 4.000 սարբազներից, անձնատուր եղավ։ Գերի վերցվեցին Հասան խանը և 205 բարձրաստիճան պաշտոնյաներ, գրավվեց մոտ 100 թնդանոթ և այլ ռազմական ավար։ 1827 թ. հոկտեմբերի 1-ին Երևանի բերդի վրա ծածանվեց ռուսական դրոշը։

Պատմական այս ակտը հայ ժողովրդի բոլոր խավերում առաջ բերեց մեծ խանդավառություն։ Նկարագրելով Երևանի հայ բնակչության ուրախությունը և հուզմունքը այդ օրերին, Խ. Աբովյանը գրել է. «Սալդաթի տուտը հենց բերդը մտավ թե չէ հազար տեղից, հազար փանջարից լացն ու արտասունքը էլ չէին թողնում, որ մարդի բերան բաց ըլի։ Բայց ով սիրտ ուներ լավ էր տեսնում, որ էն ձեռներն, էն աչքերը, որ քարացել, սառել երկնքին էին մտիկ տալիս, առանց խոսքի էլ՝ ասում էին, որ դժոխքի քանդվիլը մեղավորների համար էս դինը չէր ունենալ, ինչպես Երևանու բերդի առնիլը Հայերի համար։ ...Քանի Հայաստան իր փառքը կորցրել էր, քանի Հայք իրանց գլուխն էին Ռոի տեղ թշնամու ձեռք քցել, էս օրը, էս ուրախությունը չէին տեսել, չէին վայելել»։

Երևանի գրավումից հետո ռուսական զորքերը ունեցան նոր հաջողություններ։ Հետապնդելով բարոյալքված թշնամուն, նրանք հոկտեմբերի 13-ին գրավեցին Թավրիզը, ապա՝ Խոյի և Սալմաստի գավառները, իսկ ձմռան ամիսներին՝ Մարաղա, Արդաբիլ և Ուրմիա քաղաքները։

Պարսկական շահը առաջարկեց հաշտություն, որը և ընդունվեց ցարական կառավարության կողմից։ 1828 թ. փետրվարի 10-ին Թավրիզից Թեհրան տանող ճանապարհի վրա գտնվող Թուրքմենչայ գյուղում կնքվեց պայմանագիր, որը և այդ գյուղի անունով կոչվեց Թուրքմենչայի պայմանագիր։ Ռուս-պարսկական հաշտության պայմանագրի կնքման գործում անմիջական մասնակցություն ունեցավ ռուս մեծ գրող Ա. Ս. Գրիբոեդովը։

Թուրքմենչայի պայմանագրով Երևանի և Նախիջևանի խանությունները միացվեցին Ռուսաստանին։ Իրականացավ ցարական կառավարության վաղեմի նպատակը՝ Արաքս գետը դարձավ կայսրության սահմանագիծը։ Արևելյան Հայաստանը վերջնականապես միացվեց Ռուսաստանին։

Դեռ նոր էր վերջացել ռուս-պարսկական պատերազմը, երբ բռնկվեց ռուս-թուրքական պատերազմը (1828—1829 թթ.), որը մղվում էր երկու՝ Բալկանյան և Կովկասյան ռազմաճակատներում։ Ռազմական գործողություններն առանձնապես հաջող ընթացան Կովկասյան ռազմաճակատում՝ Հայաստանում և Վրաստանում։

Կովկասի ռուսական բանակի գլխավոր ուժերը գեներալ Պասկևիչի հրամանատարությամբ հունիսի 14-ին դուրս եկան Գյումրի գյուղից (այժմ Լենինական) և անցնելով Արփաչայ (Ախուրյան) գետը մտան Կարսի փաշայության սահմանները։ Հունիսի 19-ին ռուսական զորամասերը ծանր հարված հասցրին թուրքական հեծելազորին և ապա պաշարեցին Կարսի նշանավոր բերդը, որտեղ իր զորքով ամրացել էր Կարսի փաշա Մահմեդ-էմինը։

Կարսի բերդը խիստ ամրացված և իր ժամանակի առաջնակարգ բերդերից մեկն էր։ Նա ուներ անհավասար բազմանկյան ձև, շրջափակված էր անտաշ, խոշոր քարերից կառուցված՝ 4-ից 8 մետր բարձրությամբ երկշարք պարիսպներով, որոնց բուրգերը հարմարեցված էին հեռաձիգ թնդանոթաձգության համար։ Բերդի հարավային և արևելյան պարիսպներն ունեին ատամնավոր վերջավորություններ, ուր և տեղավորված էր թնդանոթների մեծ մասը։ Բերդի ներսում, նրա հյուսիս-արևմտյան անկյունում, ժայռերի վրա կանգնած էր անառիկ միջնաբերդը, որտեղ գտնվում էին վառոդի, հրանոթային արկերի և այլ ռազմամթերքի պահեստները։ Բերդը ուներ ստորերկրյա անցքեր, որոնցից մեկը կազմված էր 300 աստիճաններից և իջնում էր Կարս գետը։

Կարսի պաշարումը տևեց երեք օր։ Հունիսի 23-ին, երկարատև ռմբակոծությունից և համառ ճակատամարտից հետո ռուսական զորքերը գրավեցին բերդը։ Նրանց ձեռքն անցավ 151 թնդանոթ և 33 դրոշակ։ Ռազմագերիների թիվը հասավ 1350-ի, որոնց մեջ և ինքը՝ Մահմեդ-էմին փաշան իր շտաբով։

Կարսի համար մղած կռիվներում ռուսական զորքերին մեծ օժանդակություն ցույց տվին քաղաքի հայ բնակիչները։ Նրանք ռուսներին մատակարարում էին սննդամթերք և օգնում բոլոր հնարավոր միջոցներով։

Կարսի փաշայությունը թուրքական զորքերից մաքրելուց հետո Պասկևիչի զորաբանակը հուլիսի 23-ին գրավեց Ախալքալաքի, իսկ օգոստոսի 15-ին ուժեղ ռմբակոծությունից և համառ գրոհներից հետո՝ Ախալցխայի բերդերը։

Ռուսական մի այլ զորամաս գեներալ Ճավճավաձեի հրամանատարությամբ օգոստոսի 28-ին գրավեց Բայազեդի բերդը, իսկ սեպտեմբերի 12-ին՝ Ալաշկերտ քաղաքը։ Այդ օրերին ռուսական զորքի կազմում գործող հայկական կամավորական մի ջոկատ ազատագրեց Դիադինը։ Այսպիսով, ռուսական զորքերը գրավեցին նաև Բայազեդի փաշայությունը։

Պատերազմական գործողությունները նոր թափով վերսկսվեցին 1829 թ. գարնանը։ Մի շարք վճռական ճակատամարտերից հետո ռուսական բանակը հունիսին գրավեց Էրզրումը, իսկ հուլիսին՝ Բաբերդը (Բայբուրթը) և Խնուսը։

Էրզրումի գրավման օրերին Պասկևիչի բանակ եկավ ռուս հանճարեղ բանաստեղծ Ա. Պուշկինը։ Մի քանի օր մնալով գործող բանակում, նա տեսնվեց իր ընկերների ու ծանոթների հետ, մոտիկից դիտեց պատերազմական գործողությունները, եղավ Էրզրում քաղաքում և ապա Կարս—Գյումրի—Թիֆլիս ճանապարհով վերադարձավ Ռուսաստան։ Պուշկինի այդ շրջանի հուշերն ու տպավորությունները գրի են առնված նրա «Ճանապարհորդություն դեպի Արզրում» հայտնի երկում։

1829 թ. գարնան և ամռան ամիսներին թուրքական զորքերը ծանր պարտություններ կրեցին նաև գլխավոր ռազմաբեմում՝ Բալկաններում։ Ռուսական զորամասերը հունիսին գրավեցին Սիլիստրիա նշանավոր բերդը, իսկ օգոստոսի սկզբին՝ Ադրիանապոլիս քաղաքը, որտեղ և սեպտեմբերի 2-ին կնքվեց հաշտության պայմանագիր։

Ադրիանապոլսի պայմանագրով Ռուսաստանը Բալկաններում ստացավ Դանուբի դետաբերանը, իսկ Կովկասում՝ Անապան, Փոթին, Ախալցխան և Ախալքալաքը։ Սակայն պայմանագրի համաձայն ռուսական զորքերը հետ քաշվեցին Արևմտյան Հայաստանից՝ Բայազեդը, Կարսն ու Էրզրումը վերադարձվեցին Թուրքիային։ Արևմտյան Հայաստանի այդ և մյուս գավառները շարունակեցին մնալ սուլթանական կառավարության և նրա փաշաների բիրտ տիրապետության տակ։ Այսպիսով, եթե Արևելյան Հայաստանը 1820-ական թթ. վերջերին ազատագրվեց պարսիկ խաների իշխանությունից և միացվեց Ռուսաստանին, ապա Արևմտյան Հայաստանի վիճակը մնաց անփոփոխ։

XIX դարի սկզբին Արևելյան Հայաստանի և մասնավորապես Արարատյան դաշտի գյուղերի ու ավանների մի զգալի մասը կիսավեր ու անմարդաբնակ էր։ Հայաստանում իշխող խաների ու բեկերի միջև պարբերաբար կրկնվող ներքին կռիվների ու ասպատակությունների հետևանքով բնակչության մի մասը կոտորվել կամ գաղթել էր այլ երկրներ։ Ցարական կառավարության շահերը թելադրում էին վերականգնել ու ավելացնել Ռուսաստանին միացված Արևելյան Հայաստանի հայ բնակչության թիվը։ Այդ անհրաժեշտ էր նախ երկրի տնտեսական կյանքը վերականգնելու, զարգացնելու և հետևապես՝ նյութական շահույթ ստանալու համար, և ապա սահմանամերձ գոտի հանդիսացող այդ երկրում ունենալու այնպիսի վստահելի բնակչություն, որպիսին հայերն էին։ Ելնելով այս նկատառումներից ցարական կառավարությունը ջանաց թուրքական և պարսկական տիրապետության տակ մնացած հայ բնակչության մի մասը գաղթեցնել Արևելյան Հայաստան։ Այդ նպատակը իրականացնելու համար Ռուսաստանի պահանջով ինչպես Թուրքմենչայի, այնպես էլ Ադրիանապոլսի պայմանագրերում նախատեսվեցին հոդվածներ, որոնցով թույլատրվում էր հայերի գաղթը դեպի ռուսական սահմաններ՝ Արևելյան Հայաստան և Անդրկովկաս։

Նախատեսված գաղթը իրականացնելու համար կազմակերպվեց հատուկ հանձնաժողով։ Գործի կանչվեցին Ներսես Աշտարակեցին, գնդապետ Ղազար Լազարյանը, Էրզրումի Կարապետ արքեպիսկոպոսը և այլ գործիչներ։ Պասկևիչի հանձնարարությամբ ծավալվեց լայն պրոպագանդա, կարդացվեցին հորդորներ, տարածվեցին կոչեր և այլն։

Թուրքական և պարսկական տիրապետության տակ մնացած հայ բնակչությունը ուրախությամբ ընդունեց Անդրկովկաս գաղթելու առաջարկը։ Խաներն ու փաշաները աշխատեցին խափանել սպասվող գաղթը, որովհետև աշխատավոր ձեռքերից զրկվելը ձեռնտու չէր նրանց։ Սակայն չնայած դրան գաղթը լայն ծավալ ստացավ։

Առաջինը գաղթեցին պարսկահայերը։ 1828 թ. գարնանը, տաք եղանակները սկսվելուն պես, առանձին խմբերով ճանապարհ ընկավ Թավրիզի, Մակուի, Խոյի, Սալմաստի, Ուրմիայի և այլ վայրերի հայ բնակչությունը։ Գաղթն

արագացվում էր։ Շատերը թողնում էին նույնիսկ իրենց շարժական գույքը և շտապում դեպի ռուսական սահմանները։ Գաղթող պարսկահայերի թիվը կազմեց մոտ 40.000։

Ռուս-թուրքական պատերազմը վերջանալուց հետո սկսվեց նաև արևմտահայերի գաղթը։ Առաջին խմբերը ճանապարհ ընկան դեռևս 1829—1830 թթ. ձմռանը։ Բայց գաղթականական ուժեղ հոսանք սկսվեց 1830 թ. գարնանից։ Գաղթեցին գլխավորապես Էրզրումի, Կարսի և Բայազեդի փաշայությունների հայ բնակիչները։ Արևմտյան Հայաստանից գաղթեց ավելի քան 90.000 մարդ։

Այսպիսով, 1828—1830 թթ. ընթացքում Արևելյան Հայաստան և ընդհանրապես Անդրկովկաս եկան շուրջ 130.000 հայ գաղթականներ։ Սակայն դա պարսկահայ և արևմտահայ բնակչության միայն մի փոքր մասն էր։ Մեծ մասը, որ զանազան պատճառներով հնարավորություն չունեցավ գաղթի դիմելու, շարունակեց մնալ պարսկական և գլխավորապես թուրքական տիրապետության տակ։

Անդրկովկաս գաղթած հայ բնակչությունը վերաբնակվեց մեծ մասամբ սահմանամերձ շրջաններում և ամայացած բնակավայրերում։ Պարսկահայերը տեղավորվեցին Երևանի և Զանգեզուրի շրջաններում և Ղարաբաղում, արևմտահայերից էրզրումցիները՝ Ախալքալաքում և Ախալցխայում, կարսեցիները՝ Գյումրիում, Ապարանում ու Թալինում, իսկ բայազեդցիները՝ Սևանա լճի հարավ-արևմտյան ափերին։ Վերջինները, որ արևմտահայ գաղթականության ամենաստվար զանգվածն էին կազմում, հիմնեցին Նոր-Բայազեդ քաղաքը։ Օրևանում բնակություն հաստատեցին մոտ 1800 գաղթականներ։

Պարսկահայ և արևմտահայ բնակչության այս գաղթը կատարվեց ծանր պայմաններում։ Գաղթականները չունեին տեղափոխության անհրաժեշտ միջոցներ, բավարար սնունդ և հագուստ։ Նրանք մեծ զրկանքներ ու թշվառություն կրեցին ոչ միայն տեղափոխության ընթացքում, այլև նոր բնակավայրերում հաստատվելուց հետո։ Ցարական կառավարությունը փոխառության կարգով բաց էր թողել չնչին գումար։ Չստանալով որևէ լուրջ օգնություն, գաղթականներն ընկան մեծ կարիքի և ծայր աղքատության մեջ։ Նրանցից շատերը դատապարտվեցին սովի և տարափոխիկ հիվանդությունների։ Առանձնապես մեծ զրկանքներ կրեցին պարսկահայ գաղթականները։

Հայտնի դեկաբրիստ Ալեքսանդր Մարլինսկին, որ այդ տարիներին գտնվում էր Հայաստանում, պարսկահայ գաղթականների ծանր վիճակի մասին գրել է. «Ոսկե սարեր խոստացան, և նրանք շարժվեցին... եկան և չգտան հացի հատիկ, գլուխ դնելու տեղ, հյուղ՝ կյանք պահպանելու համար։ Ոչինչ չէր պատրաստվել։ Նրանց տվեցին կորստաբեր կլիմա, անբերրի հող և դրա հետ աննշան դրամական օգնություն, այն էլ մի՞մասին»։

Ընդհանուր առմամբ, սակայն, 1828—1830 թթ. գաղթը ունեցավ դրական և կարևոր նշանակություն հայ ժողովրդի համար։ Գաղթի շնորհիվ բարելավվեց Արևելյան Հայաստանի ավերված ու քայքայված տնտեսության վիճակը, բազմացավ նրա հայ բնակչությունը։ Վերականգնվեց օտար տիրողների ձեռքով ցաք ու ցրիվ արված հայ ժողովրդի հավաքական գոյությունը։

Թուրքմենչայի պայմանագրից անմիջապես հետո ցարական կառավարությունը վերացրեց Արևելյան Հայաստանում մինչ այդ գոյություն ունեցող խանական վարչաձևը և ստեղծեց ռուսական վարչակարգ։ 1828 թ. կազմվեց Հայկական մարզ, որի մեջ մտնում էին Երևանի ու Նախիջևանի գավառները և Օր-

դուբադի գավառակը։ 1849 թ. մի շարք նոր վարչական ռեֆորմներից հետո կազմվեց Երևանի նահանգը՝ բաղկացած Երևանի, Նախիջևանի, Ալեքսանդրապոլի, Նոր-Բայազեդի և Օրդուբադի գավառներից։ Արևելյան Հայաստանի մնացած շրջանները ընդգրկվեցին Թիֆլիսի և Ելիզավետպոլի (Գյանջայի) նահանգների մեջ։ Այս վարչաձևը հիմնականում պահպանվեց մինչև 1917 թ.։

3. ԴԵԿԱԲՐԻՍՏՆԵՐԻ ԵՎ ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԻՆ

Ռուս-պարսկական 1826—1828 թթ. պատերազմի ընթացքում, ինչպես տեսանք, Արևելյան Հայաստանը ազատագրվեց խանների ու բեկերի ծանր լծից և միացվեց Ռուսաստանին։ Հայ ժողովրդի համար բախտորոշ նշանակություն ունեցող այդ պատերազմին գործոն մասնակցություն ունեցան բազմաթիվ դեկաբրիստներ՝ իր ժամանակի նշանավոր ռուս հեղափոխականները և հազարավոր հայ կամավորներ ու աշխարհազորայիններ։

Ռուս ազնվական հեղափոխականների 1825 թ. դեկտեմբերի զինված ելույթը ճնշելուց հետո ցար Նիկոլայ I-ի հրամանով Կովկաս աքսորվեցին ապըստամբության մոտ 70 ղեկավար գործիչներ՝ սպաներ և ավելի քան 2800 շարքային մասնակիցներ՝ զինվորներ։ Գտնվելով Կովկասի ռուսական գործող բանակի շարքերում, նրանք գրեթե բոլորը եղան Հայաստանում և անմիջականորեն մասնակցեցին այդ տարիներին տեղի ունեցող պատերազմական գործողություններին։

Կովկաս աքսորված դեկաբրիստների և նրանց գործի «մեղսակիցների» թվում էին գտնվում Ե. Ե. Լաչինովը, Մ. Ի. Պուշչինը, Ն. Ն. Դեպրերադովիչը, Ա. Ս. Գանգեբլովը, Ն. Ն. Սեմիչևը, Ֆ. Գ. Վիշնևսկին, Ա. Ա. Դոբրինսկին, Դ. Ա. Իսկրիցկին, Ա. Ե. Ռիննկևիչը, Ն. Ն. Օրժիցկին, Ն. Ռ. Ցեբրիկովը և ուրիշներ։ Նրանք բոլորը մասնակցություն ունեցան մասնավորապես Արևելյան Հայաստանում ծավալված կռիվներին։

Եվդոկիմ Եմելյանովիչ Լաչինովը, օրինակ, ակտիվ մասնակցություն ունեցավ Օշականի մոտ 1827 թ. օգոստոսի 17-ին տեղի ունեցած ճակատամարտին, Սարդարապատի, Երևանի գրավմանը և ցուցաբերած քաջության համար ստացավ ենթասպայի կոչում։ Միխայիլ Իվանովիչ Պուշչինը, լինելով սակրավորների գումարտակի հրամանատար, հաջողությամբ կազմակերպեց մի շարք բերդերի և մասնավորապես Երևանի բերդի պաշարման գործը։ Նիկոլայ Նիկոլաևիչ Դեպրերադովիչի մասին իր գնդի հրամանատարը գրել է, որ նա «Սարդարապատ և Երևան ամրոցների պաշարման ժամանակ իրեն դրսևորեց ղեկավանց քաջությամբ»։ Ֆեոդոր Դավրիլովիչ Վիշնևսկու ծառայության թերթիկում ասված է, որ Սարդարապատի գրավման գործում ցուցաբերած խիզախության համար պարգևատրվել է Գեորգիի զինվորական շքանշանով, իսկ Երևանի գրավման համար արժանացել է ենթասպայի աստիճանի։ Ալեքսանդրը Եֆիմովիչ Ռիննկևիչը մասնակցեց բազմաթիվ մարտերի։ Նրա մասին գեներալ Պասկևիչը 1827 թ. հոկտեմբերին զեկուցել է ցարին. «Պրապորշչիկ Ռիննկևիչը թշնամու դեմ մղված մարտերում իրեն դրսևորեց որպես անվեհեր մարտիկ»։ Անվեհերությամբ կռվում էին Կովկասի գործող բանակում գտնվող նաև մյուս դեկաբրիստները։

Պատերազմական գործողություններին անմիջական մասնակցություն ցույց տվեցին նաև դեկաբրիստների ապստամբության շարքային մասնակիցները, որոնցից կազմվեց հատուկ գունդ՝ Լեյբ-Գվարդիայի հավաքական գունդ անունով։ Գունդը մեծ դեր խաղաց մասնավորապես Երևանը պարսկական խաների լծից ազատագրելու գործում։ Բերդի պաշարման ամբողջ ընթացքում շարքային դեկաբրիստները գտնվում էին պաշարող զորքերի առաջին դիրքերում։ 1827 թ. հոկտեմբերի 1-ին, Երևանի բերդի գրավման օրը հավաքական գնդի վաշտերը առաջինը սկսեցին գրոհը և առաջինը մտան բերդ։ Գնդի մարտիկները ցուցաբերեցին խիզախության և հերոսության հիանալի օրինակներ, որի համար շատերը ստացան շքանշաններ։

Ռուսական կովկասյան կորպուսի զանազան ջոկատներում գտնվող դեկաբրիստները մասնակցություն ունեցան նաև 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմին։ Կարսի, Ախալցխայի, Էրզրումի, Բաբերդի և մյուս քաղաքների գրավման ժամանակ նրանք թեժ մարտեր էին վարում թուրքական զորքերի դեմ։ Առանձնապես աչքի ընկան, բացի արդեն հիշատակված Պուշչինից, Լաչինովից, Գանդեբլովից, նաև Ի. Գ. Բուրցովը (սպանվեց Բաբերդ քաղաքի համար մղվող կռիվներում 1829 թ. հուլիսին), Պ. Պ. Կոնովնիցինը, Ալեքսանդր Բեստուժեվ-Մարլինսկին և ուրիշներ։ Շարքային դեկաբրիստներից շատերը և հատկապես Չերնիգովյան գնդի մոտ 800 զինվորներ, որոնք մասնակցել էին Ուկրաինայում բռնկված հակացարական ապստամբությանը և ապա աքսորվել Կովկաս, նույնպես գործուն մասնակցություն ունեցան ինչպես 1826—1828 թթ. ռուս-պարսկական, այնպես էլ 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմներին։

Ի տարբերություն ցարական գեներալների ու չինովնիկների, Կովկաս աքսորված դեկաբրիստները ջերմ վերաբերմունք էին ցուցաբերում հայ ժողովրդի նկատմամբ։ Ցարական բռնապետության դեմ զենք բարձրացրած ռուս հեղափոխականները, որոնց համար հարազատ էր ժողովուրդների ազատագրության գաղափարը, առանձին ոգևորությամբ կռվում էին պարսկական խաների և թուրքական փաշաների դեմ։ Մասնակցելով 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմին, պատերազմ, որի հետևանքով Արևելյան Հայաստանը միացավ Ռուսաստանին, Կովկաս աքսորված դեկաբրիստները դրանով իսկ իրենց լման ներդրեցին արևելահայության նոր կյանքի ու ճակատագրի կերտման գործում։

Պարսկաստանի և Թուրքիայի դեմ Ռուսաստանի մղած պատերազմներում հայ ժողովուրդը լայն մասնակցություն ունեցավ։ Խաների ու փաշաների ծանր լծից ազատագրվելու իր հույսերը կապելով ռուսական զենքի հաղթանակի հետ, նա կատարեց հնարավոր ամեն բան՝ այդ հաղթանակն ապահովելու համար։ Հայ բնակչությունը իր ուժերի ներածին չափով ռուսական զորքերին օգնեց ոչ միայն սննդամթերքով, անհրաժեշտ տեղեկություններ հաղորդելով և բազմաթիվ այլ ծառայություններ ու հանձնարարություններ կատարելով, այլև զինված պայքարով։ Պատերազմական գործողությունների ժամանակ հայ գյուղացիությունը հաճախ զենքի էր դիմում իրեն հարստահարող խաներից ու փաշաներից ազատագրվելու համար։ Ռուսական զորքերի շարքերում արիաբար կռվում էին բազմաթիվ հայ կամավորներ ու աշխարհազորայիններ։

Հայ կամավորական ջոկատներ ռուսական բանակում հանդես եկան դեռևս XVIII դարում։ Սակայն կամավորական շարժումը լայն ծավալ ստացավ առանձնապես 1826—1828 թթ. ռուս-պարսկական և 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմների ժամանակ։ 1826 թ. ամռանը, երբ դեռ նոր էր սկսվել ռուս-պարսկական պատերազմը, Շամշադինում հոգևորական Գրիգոր Մանուչարյանի ղեկավարությամբ կազմակերպվեց կամավորական մի ջոկատ, որը կարճ ժամանակամիջոցում իր շարքերում ընդգրկեց 500-ի չափ հեծյալ մարտիկներ։ Կովկասի ռուսական բանակի գլխավոր հրամանատարության ցուցումներով նա ռազմական գործողություններ ծավալեց Շամշադինի և Լոռի-Փամբակի վրա հարձակումներ սկսած Երևանի սարդարի հրոսակախմբերի դեմ և աչքի ընկնող ծառայություններ մատուցեց ռուսական զորքերին։ Նույն 1826 թ. աշնանը գեներալ Մադաթովի նախաձեռնությամբ կամավորական մի ջոկատ կազմակերպվեց Ղարաբաղի հայերից։ Արիաբար գործելով ռուսական զորքերի շարքերում, այն հաջողությամբ կատարեց մի շարք մարտական առաջադրանքներ։

1827 թ. մարտ ամսին, Ներսես Աշտարակեցու, բանաստեղծ Հարություն Ալամդարյանի և Թիֆլիսի նահանգապետ գեներալ Սիպյագինի ղեկավարությամբ Թիֆլիսում ստեղծվեց հայկական կամավորական հետևակ գունդ։ Մայիս ամսին այն փոխադրվեց Երևան և մտնելով գործող բանակի մեջ մասնակցեց նրա մարտական գործողություններին։ Գունդն ուներ իր կանոնադրությունը, զինվորագրվել կարող էին 18-ից մինչև 30 տարեկան հասակի բոլոր հայ տղամարդիկ։ Զինվորագրվածների մեջ կային Թիֆլիսեցիներ, ղարաբաղցիներ, կարսեցիներ, էրզրումցիներ, բայազեդցիներ, երևանցիներ, խոյեցիներ և այլն։ Հայկական կամավորական այս գնդի և նրա մարտիկների մասին ժամանակակիցներից մեկը՝ ռուս գեներալ Ն. Ն. Մուրավյովը, հետևյալն է պատմում. «Թիֆլիսում հայկական գնդին դրոշակ տրվեց. գունդն արշավանքի դուրս եկավ հոժարակամ և արտասովոր եռանդով. նա ուներ երիտասարդ զինվորների ոգի... թեև այս գունդը զինված էր վատ հրացաններով, բայց կանոնավոր զորքի տեսք ուներ, ենթարկվում էր հրամանատարությանը, ճակատ էր կանգնում և գրանցվում էր ցուցակներով...։ Մարտի մեջ նրանք հանդես էին գալիս ինչպես վայել է զինվորին և կռվում էին այնպես, ինչպես միայն կարելի էր ցանկանալ։ Այս նոր զորքը ներշնչում էր լավագույն հույսեր, որ կգա մի ժամանակ, երբ տեղական զորքերից կարելի կլինի կազմել մի պատկառելի կորպուս... Այս առաջին գունդը միանալով մեզ, հետզհետե ուժեղանում էր Երևանի խանության բնակիչներով։ Բոլորը հավատարիմ ծառայության երդում էին ընդունում և մեզ հետ մասնակցում էին մեր բոլոր արշավանքներին»։

1828 թ. ամռանը, երբ սկսվեց ռուս-թուրքական պատերազմը, կազմակերպվեցին հայկական կամավորական նոր ջոկատներ։ Պատերազմի առաջին ամիսներին Արարատյան դաշտի ու հարևան շրջանների հայ բնակչությունից հավաքագրվեցին մի քանի հազար հետևակ և հեծյալ կամավորներ։ Նրանք ունեին հատուկ տարազ. ծածկում էին կարմիր գլխարկ, հագնում կանաչ ու կապույտ գույնի մահուդից կարած համազգեստ և դեղնագույն կոշիկներ։ Ռուս-թուրքական պատերազմի ամբողջ ընթացքում կամավորները գտնվում էին ռուսական բանակի առաջապահ զորամասերում և ակտիվորեն մասնակցում էին ռազմական գործողություններին։ Երբ պատերազմական գործողությունները ծավալվեցին Արևմտյան Հայաստանում, տեղական հայ բնակչու-

Թյունից կազմակերպվեցին կամավորական և աշխարհազորային նոր խմբեր, որոնք 1829 թ. գարնան ու ամռան ամիսներին գործեցին Բայազեդի, Կարսի և Էրզրումի շրջաններում, Բայազեդի կամավորների թիվը հասավ 2000-ի։ Կարսում կազմվեց հետևակային գումարտակ և 800 մարդուց բաղկացած հեծելագունդ։ Առանձնապես մեծ եռանդ ու արիություն ցուցաբերեցին Բայազեդի շրջանի հայ կամավորները։ Ռուսական փոքրաթիվ զորամասի հետ միասին նրանք հերոսաբար պաշտպանեցին Բայազեդի բերդը և ետ շպրտեցին Վանի փաշայի մեծաթիվ զորքերի կատաղի գրոհները։

Հայ կամավորական ջոկատները գործեցին մինչև պատերազմական գործողությունների վերջը։ Կամավորներից շատերն իրենց ցուցաբերած արիության համար ստացան շքանշաններ և մեդալներ։

4. ՆՈՐ ԷՏԱՊ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Արևելյան Հայաստանի ազատագրումը պարսկական լծից և նրա միացումը Ռուսաստանին մեծ խանդավառություն առաջ բերեց հայ ժողովրդի լայն շրջաններում։ Ամենուրեք այն դիտվեց որպես արևելահայերի ազգային ազատագրություն։ Բնորոշ է, որ իր ժամանակի հայ քաղաքական ու մշակույթի աշքի ընկնող գործիչները և այդ թվում նշանավոր գրողներ Հարություն Ալամդարյանը, Մեսրոպ Թաղիադյանը, հայ մեծ լուսավորիչ-դեմոկրատ Խաչատուր Աբովյանը ամենայն ջերմությամբ ու ոգևորությամբ ողջունեցին այդ պատմական ակտը։

Ազատվելով պարսկական խաների լծից և անցնելով ցարական Ռուսաստանի տիրապետության տակ, արևելահայերը, իհարկե, չազատվեցին ազգային ճնշումներից և սոցիալական հարստահարություններից։ Ցարական կառավարությունը բերեց նոր լուծ, շահագործման ու ճնշման նոր ձևեր ու մեթոդներ։ Որպես կալվածատերերի պետական օրգան, նա օրինականացնում էր աշխատավորության կեղեքումներն ու ճնշումները ինչպես ռուս ժողովրդի և ռուսական կայսրության մեջ մտած մյուս ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի նկատմամբ։ Ցարիզմը վարում էր գաղութային, ազգային ճնշման քաղաքականություն, որի ծանրությունը իր վրա զգաց նաև հայ ժողովուրդը։ Հայ աշխատավորական մասսաները մեկ անգամ չէ, որ զենք բարձրացրին ցարիզմի դեմ։ Այսպես, արդեն 1830-ական թթ. վերջերին, ինչպես նաև հետագայում՝ 1840—1850 և 1870-ական թթ. Հայաստանի տարբեր մասերում բռնկվեցին գյուղացիական հուզումներ։ 1885 թ., երբ ցարական սատրապները փակեցին հայկական դպրոցների մեծ մասը, տեղի ունեցան զինված ընդհարումներ հայ բնակչության և ոստիկանության միջև։ Սակայն, չնայած այդ բոլորին, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին ստեղծված պայմաններում միակ և լավագույն ելքն էր, որ հնարավորություններ էր ընձեռում հայ ժողովրդի տնտեսական, կուլտուրական և քաղաքական կյանքի զարգացման համար։

Այդ նշանավոր իրադարձության հետևանքով հայ ժողովուրդը նախ և առաջ փրկվեց ֆիզիկական ոչնչացման վտանգից, ապահովվեց նրա թվական աճը և հավաքական գոյությունը։ Պարսիկ խաների ու թուրք փաշաների վարած ազգային բիրտ ճնշումների, հալածանքների, կոտորածների, ինչպես

նաև միջֆեոդալական կռիվների ու զանազան ավազակախմբերի անվերջ արշավանքների հետևանքով քայքայվել, ավերվել էր երկիրը։ Բնակչության թիվը գնալով փոքրանում, նվազում էր, հայերի ֆիզիկական գոյությունը դրված էր վտանգի տակ։ Միացման ակտից հետո այդ վտանգը վերացվեց։ Ռուսական կայսրության կազմում հայ բնակչությունը չէր ենթարկվում կոտորածների և ազգային-կրոնական այնպիսի բիրտ հալածանքների, ինչ որ կատարվում էին խաների ու փաշաների տիրապետության ժամանակ, չկային ներֆեոդալական ավերիչ կռիվներ։ Նման պայմաններում սկսվեց հայերի հոսանքը դեպի Արևելյան Հայաստան, ուր արագությամբ աճեց նրանց թիվը։ Բնորոշ է, օրինակ, որ 1840-ական թթ. Արևելյան Հայաստանի բնակչության թիվը, XIX դարի սկզբի համապատասխան թվի հետ համեմատած, կրկնապատկվել էր։ Դա նշանակում էր, որ հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը ապահովվում էր Ռուսաստանի տիրապետության տակ անցած Արևելյան Հայաստանում։

Հայաստանի միացումը Ռուսաստանին առաջադիմական նշանակություն ունեցավ նաև երկրի տնտեսական կյանքի զարգացման գործում։ Ռուսական կայսրության կազմում Արևելյան Հայաստանը ստացավ տնտեսական զարգացման նոր հնարավորություններ։ Պարսկական խաների և թուրք փաշաների տիրապետության ժամանակ Հայաստանի տնտեսությունը ապրում էր լճացում և դեգրադացիա։ Ունենալով տնտեսական զարգացման ավելի բարձր մակարդակ, քան Պարսկաստանը և Թուրքիան, Ռուսաստանը խթանեց Հայաստանի տնտեսական կյանքի զարգացումը, ստեղծեց դրա համար բարենպաստ պայմաններ։ Չնայած ցարիզմի գաղութային քաղաքականությանը, Արևելյան Հայաստանում և ամբողջ Անդրկովկասում արդեն XIX դարի կեսերին տեղի են ունենում զգալի տեղաշարժեր տնտեսական կյանքի զարգացման ուղղությամբ։ Քայքայվում է բնատնտեսությունը, զարգանում են ապրանքադրամային հարաբերությունները, որոնց նպաստում են 1864—1871 թթ. Անդրկովկասում կիրառված գյուղացիական ռեֆորմը և ճանապարհաշինարարությունը։ 1860—1870 թթ. բարեկարգվեցին և կառուցվեցին Թիֆլիս—Ղարաքիլիսա—Երևան, Երևան—Ալեքսանդրապոլ, Կողբ—Նախիջևան—Գորիս խճուղիները։ 1883 թ. ավարտվեց Բաքու—Բաթում, իսկ 1899 թ.՝ Թիֆլիս—Ալեքսանդրապոլ—Կարս երկաթգծի շինարարությունը։

XIX դարի երկրորդ կեսին հիմնվեցին պղնձի արտադրության աչքի ընկնող կենտրոններ Ալավերդում և Զանգեզուրում, իսկ դարի վերջերին՝ արդյունաբերական ձեռնարկություններ՝ բամբակի, կաշվի, մետաքսի, գինու և կոնյակի արտադրության գծով։ Ծավալվեց թե՛ ներքին, և թե՛ արտաքին առևտուրը։ Ավելացավ քաղաքային բնակչության թիվը։ Երևանը 1865 թ. ուներ 14.000, իսկ 1897 թ.՝ 29.000 բնակիչ։ Ալեքսանդրապոլը 1865 թ. ուներ 16.000, իսկ 1897 թ.՝ 32.000 բնակիչ։

Ակնհայտ է Ռուսաստանի պրոգրեսիվ դերը Արևելյան Հայաստանի տնտեսական կյանքի զարգացման գործում։ Ֆ. Էնգելսը Կ. Մարքսին ուղղած իր նամակներից մեկում դեռևս 1851 թ. գրում էր. «Ռուսաստանը իսկապես պրոգրեսիվ դեր է խաղում Արևելքի նկատմամբ»։

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին խոշոր նշանակություն ունեցավ հայկական մշակույթի զարգացման գործում։ Ռուս ժողովրդի հարուստ ու առաջավոր կուլտուրան նպաստեց հայ գրականության, արվեստի ու գիտության ծաղկմանը։ Օրինակ, այնպիսի խոշոր հայ գրողներ, ինչպիսիք են Խա-

չատուր Աբովյանը, Գաբրիել Սունդուկյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Հովհաննես Թումանյանը և ուրիշներ, իրենց վրա կրել են ռուս դասական գրականության ազդեցությունը։ Խոսելով այս մասին հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը գրել է. «Սիրով ու պատկառանքով խոնարհվում եմ ռուսական մեծ ազգի հոյակապ գրականության առջև, Պուշկինի, Լերմոնտովի, Գոգոլի, Դոստոևսկու, Տուրգենևի, Չեխովի, Տոլստոյի և իրենց արժանավոր ժառանգների գրականության առջև, որի վրա կրթվել են մեր գրողներից ու մտավորականներից շատ շատերը»։

Շնորհիվ այն բանի, որ Հայաստանը միացավ Ռուսաստանին, հայ աշխատավոր մասսաները իրենց բախտը կապեցին ռուս մեծ ժողովրդի բախտի, նրա ազատագրական պայքարի հետ։ Արդեն 1860-ական թթ. հայ նշանավոր հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը քաղաքական սերտ կապեր հաստատեց ռուս ականավոր հեղափոխականներ Գերցենի, Օգարյովի, Բակունինի և ուրիշների հետ։ XIX դարի վերջերից սկսած հայ բանվորական ու գյուղացիական շարժումները ընդգրկվեցին համառուսական հզոր հեղափոխական շարժման մեջ, շարժում, որը և իսկական ազատություն բերեց ինչպես ռուս, այնպես էլ հայ ժողովրդին։

Այսպիսով, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին պրոգրեսիվ խոշոր իրադարձություն էր, շրջադարձային կետ հայ ժողովրդի համար։ 1828 թ. սկսած հայ ժողովրդի մի հիմնական հատվածի կյանքը ընթացավ նոր հունով։ Նրա տնտեսական, քաղաքական ու մշակութային զարգացման համար ստեղծվեցին նպաստավոր պայմաններ ու հեռանկարներ։ Սկսվեց նոր էտապ հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ։